

ՄԱՅՐ ԱԹՈՒ

† ՀԱՆԳՐԱՅ Տ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ներկայ տարուայ փետր. 11-ին հանգեաւ ի Տէր միաբանութեանս երիտասարդ և զիանազան անդամներէց մէկը՝ Տ. Մեսրոպ վարդապետ Մագսուդեանց, նա ծնուել է 1876 թուին Ապրիլի 1-ին Ակնում, և իւր ուսումը ձեմարանում աւարտելուց յետոյ՝ կատարելագործուել է Փարիզում լեզուարանական դիպլոմիւնների մէջ, աշակերտելով հայագէտ պրոֆ. Մեյիէլին:

Միաբանութեանս անդամ է ընդունուել 1902 թ. յուլիսի 28-ին, սարկաւաղ ձեռնադրուելով և նոյն թուի հոկտեմբերի 12-ին արեղայ. վարդապետական աստիճան ստացել է 1903 թ. հոկտ. 24-ին: Նոյն թուի մեծ պատի ընթացքում քարոզիչ է նշանակուած Ախալքալաքի և շրջակայքի գիւղերի համար. ապա պաշտօնավարել է Ուրմիում որպէս փոխանորդ և թարիզում որպէս առաջնորդական տեղապահ 1903 թ. հոկտ. 30-ից մինչև 1905 թ. դեկտ. 14-ը: Ազուլիսի Ս. Թովմա առաքելի վանահայր է նշանակուել 1906 թուին, ուր և իւր ազատ ժամերը նուիրել է Ազուլիսի և շրջակայքի ձեռագրերի համառօտ նկարագրութեան և յիշատակարանների արտագրութեան, որ հետզհետէ ստագրուեցաւ «Արարատի» մէջ: Որպէս Ղուկասեան սան 1907 թ. ուղարկուած է արտասահման, ուր ուսումը աւարտելուց յետոյ՝ նշանակուած է ձեմարանի լեզուարանութեան դասատու 1912 թ. սեպտ. 1-ին, համալսարան-

նում նա գրում է իւր կարևոր գիտական աշխատութիւնը գոկոորութեան աստիճան ստանալու համար Le parler Arménien d'Արմ և ապագրում է 1912 թ. Փարիզում: Տարաբաղաբար նորա ուսուցչութիւնը ձեմարանում շատ երկար շաբեց, թէև այդ կարճ ժամանակն էլ արդիւնաւոր եղաւ և վաստակեց իւր ունկնդիրների ուշադրութիւնն ու համակրութիւնը, և 1915 թ. իւր ցանկութեան համաձայն նշանակուեց Քիշնևի Կոնսիստորիայի նախանդամ. կրկին ձեմարան հրաւիրուեցաւ 1917 թ., որպիսի պաշտօնում և վախճանուեց անսպասելի կերպով ներկայ թուականի փետր. 11-ին:

Բացի վերոյիշեալ աշխատութիւններից թարգմանել է մի շարք տետրակներ, որոնցից յիշատակելի են «Օտար փունջեր»-ի Ա. և Բ. տետրակները, և Վրասայի «Շակունտալա» հնդկական փոքրիկ վէպը Ֆրանսերէնից 1914 թուին. մի տարի յետոյ հրատարակել է Վ. Գեղամեանի օժանդակութեամբ «Յոյզերը», ամփոփելով այնտեղ իւր ինքնուրոյն բանաստեղծութիւններն ու թարգմանականները, Ֆրանսիացի, ռուս, պարսիկ և հելլէն նշանաւոր բանաստեղծներից: Ինքնուրոյն բանաստեղծութիւններն համեմատաբար աւելի պակաս արժէքաւոր են, մինչդեռ կարող էր նա շատ արդիւնաւոր լինել թարգմանականի մէջ, լաւ ծանօթ լինելով արևելեան և արևմտեան շատ լեզուների: Տաճկաստանից բերուած ձեռագիրներից նա հրատարակեց 1916 թուին «Հաւարարան անուանց կաթուղիկոսաց (Աղթամարայ)», որ մի համառօտ ժամանակագրութիւն է. աշխատակցել է Արարատին և Հայագիտական Շոդակաթ ժողովածուին դիտական և քննադատական յօդուածներով. մեզ մօտ է հանդուցեալի մի յօդուածը Մանրանկարչական տաւերի ծագման մասին, որ պատրաստել է Շոդակաթի Բ. զբբի համար:

Բացի դորանից նա պատրաստել է մանրանկարչական դարդագրերի մի մեծ ժողովածու իւր իսկ ձեռքով արտանկարած հայ ձեռագիրներից, որի հրատարակու-

Թիւնը մի կարևոր նպաստ կլինէր նախնեաց արուեստի տարածման և ժողովրդականացման:

Օժտուած բանաստեղծական և նկարչական ձիրքերով, լեզուաբանական սուր յիշողութեամբ և պատրաստութեամբ, նա կարող էր դեռ ևս շատ արդիւնաւոր լինել հայ արուեստի և գիտութեան մշակոյթի ասպարիզում, եթէ այսպէս անսպասելի չխզուէր կեանքի թելը երիտասարդական և հասունութեան լաւագոյն տարիներում: Նորա կորուստը շատ զգալի է մեր միաբանութեան համար, որ առանց այն էլ սակաւթիւ է իւր գիտական պատրաստութեամբ անդամներով:

Օրհնեալ լինի նորա յիշատակը:

Գարեգին Եպիսկոպոս

